«Քայլ առ քայլ»

բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ *Ժաննա Պողոսյան*

Մանկապարտեզ՝ *«Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ*

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Հայկական ազգային տոներ և ծեսեր

1.1.Տոների և ծեսերի էությունը և նշանակությունը ……6

1.2.Ազգային ծեսը մանկան ընդհանուր զարգացման միջոց……8

1.3.Ծիսական խաղերի իրականացում……9

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 2.

2.1.Ազգային տոների,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում……11

2.2. Սուրբ Զատիկ տոնի նախապատրաստական փուլը…….. 17

2.3. Տոնի անցկացման փուլը : Պարապմունք–դաս……18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 20

Օգտագործված գրականության ցանկ……22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ինչ է կրթության,դպրոցին նպատակը: Մանուկը բարոյական կյանքի փիլիսոփայությունը, կյանքին հասկացողությունը չունի: Պետք է անոր հոգեկան զգացումներուն հավասարակշիռ դաստիարակություն մը տալ … Ուսուցի՛չ, պարոններ և քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը»: **Կոմիտաս**

«Ժողովրդական արմատներից զուրկ կրթությունն անզոր է»: **Կ. Դ. ՈՒշինսկի**

Հետազոտական աշխատանքի թեմաի նկատմամաբ հետաքրքրությունը ինձ մոտ առաջացել է անցյալի, սեփական արմատների, պատմության, մշակույթի, ապրելակերպի նկատմամբ ունեցած հետաքրքրությունից և այն սերունդներին փոխանցելու, կրթելու, դաստիարակելու գործընթացում կիրառելու ցանկությունից:

Միայն անցյալի հիման վրա կարելի է հասկանալ ներկան և կանխատեսել ապագան: Իսկ այն ժողովուրդը, ով սերնդեսերունդ չի փոխանցում այն ամենն, ինչ ամենաարժեքավորն է:

Ազգային մշակույթը երեխայի հոգու անբաժանելի մասն է, սկիզբ, որը ծնում է անհատականություն, հայրենասիրական զգացմունքների ձևավորում և հոգևոր զարգացում: Աշխատանքիս թեման խիստ արդիական է, քանզի նախադպրոցականներին ժողովրդական մշակույթի ակունքներին ծանոթացնելու խնդիրը ներկայումս կարևոր ու առաջնային է այն ժամանակ, երբ թշնամին փորձում է խեղաթյուրել Հայաստանի հոգևոր, ազգային վերածնունդը: Այս պայմաններում հասարակությանը և պետությանը անհրաժեշտ են կրթական մոդելներ, որոնք ապահովում են կրթության հոգևոր և բարոյական բովանդակությունը:

Լինելով նախադպրոցական հաստատության դաստիարակ և համամիտ լինելով մեծն Կոմիտասի հետ, կարծում եմ պետք է ամենայն զգուշությամբ պետք է կատարենք մեր առջև դրված խնդիրը, իսկ խնդրահարույց իրավիճակներում անպայման պետք է հիմնվենք մինչև այսօր արվածի, այսինքն՝ փորձի, մեզ մոտ կիրառված

դաստիարակության վրա: Մենք ունենք հզոր ազգային դպրոց, որը չենք կարող Անտեսել: Այն հարազատ է ժողովրդին, և չենք կարող հիմնական տեղը տալ կասկածելի նորամուծություններին: Իսկ նորամուծություն կատարվում է, երբ յուրացված է ավանդականը: Սակայն ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով:

Մանկապարտեզում հատկապես ոչ մի զիջում չի կարելի կատարել: Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն՝ նյութի թե՛ ընտրության և թե՛ մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

Հետազոտության նպատակն է ոչ միայն ներկայացնել ազգային տոների , ծեսերի կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների կրթական և դաստիարաչական գործընթացում, այլև երեխաներին ծանոթացնել ազգային տոներին և ծեսերին, անցկացման կարգին, սովորեցնել ծիսական երգերը, մասնակից դարձնել խաղերին, զարգացնել գեղագիտական ճաշակը , ապահովել ֆիզիկական ակտիվություն, հարստացնել բառապաշարը ,զարգացնել խոսքի և հաղորդակցման կարողությունները, ամրացնել բարոյական և ազգային դաստիարակությունը :

Հետազոտական աշխատանքի և միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեության արդյունքում ցանկանում եմ տեսնել մանկապարտեզ – ընտանիք - համայնք արդյունավետ համագործակցություն, ինչպես նաև ազգային ծեսը և

մշակույթը յուրացրած երեխայի մոտ ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու պատրաստակամություն:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածական մասից, 2 գլուխներից՝ տեսական մաս և գործնական մաս (Գլուխ 1.ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ. Հայկական ազգային տոները և ծեսերը , Գլուխ 2. Գործնական մաս . Պարապմունք – դաս): Աշխատանքը ամփոփվում է եզրակացությունով և առաջարկությամբ: Առաջին գլխում ներկայացվող տեսական նյութի մեջ անդրադարձ եմ կատարել ծեսերինազգային տենորին, դրնաց առանձնահատկություններին ու նշանակությանը: Այն երեխաներին ուսուցանելու և նրանց դաստիարակման անբաժանման մասը դարձնելու համար կազմակերպել ենք տարբեր ազգային խաղեր: Երկրորդ գլխում ներկայացրել եմ հետազոտության ընթացքը պարապմունք – դասի միջոցով: Նպատակն այն է, որ երեխաների մոտ զարգանա սեր դեպի բնությունը և որ ազգային մշակույթի արժեքները չմոռացվեն: Այս դեպքում երեխան հանդիսանում է ծեսը պահպանողն և փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ:

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Տեսական մաս

Գլուխ 1. Հայկական ազգային տոներ և ծեսեր

1.1 Տոների և ծեսերի էությունը և նշանակությունը

Մշակույթը չէր պահպանվի, և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված **ծեսերը**: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր: Ծեսը հավատացյալների վրա ներգործելու ազդու միջոց է: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնություններ և քրիստոնեական դավանության: Այդ գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը,Վարդավառը: Մարդիկ անքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը՝ ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները: Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա, ինչպես նաև երեխաների ճիշտ դաստիարակության և բնականոն զարգացման վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը **ծիսակարգն** է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Մշակույթի ժառանգականության փոխանցման երրորդ ավանդական ձևը **սովորույթն** է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: [2]

Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ, ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են: [1]

1.2. **Ազգային ծեսը մանկան ընդհանուր զարգացման միջոց**

«… Ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով»:

Արթուր Շահնազարյան

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար:

Բնության մեջ ապրող երեխան ճարպիկ է, գործունյա, անվախ, ուժեղ, խելացի, սրամիտ, համարձակ և այլն, որովհետև միայն այդպիսի հատկություններ ունեցողը կարող է ոչ միայն գոյատևել այդ միջավայրում, այլև լիարժեք անդամը լինել, մասնակից լինել միջավայրի ինչպես ամենօրյա գործունեությանը, այնպես էլ իր անձնային հետաքրքիր որակներով այն փոխել, զարգացնել: Մանուկը ստեղծել է այնպիսի խաղեր, որտեղ օգտագործել և ցուցադրել է իր մտավոր և ֆիզիկական կարողությունները, ստեղծագործական երևակայությունը: Խաղի միջոցով լուծվում են խնդիրներ, որոնք կյանքը դնում է մանկան թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ հոգևոր զարգացման ընթացքի վրա: Հենց այս պատճառով էլ խաղը դառնում է ծիսական միջավայրում ներառվելու միջոց: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային

ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով:

Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Իսկ մեծերն էլ պետք է իմանան, որ այդ ամենը հավասարապես հարկավոր է բոլորին, ըստ այդմ էլ՝ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում մանուկը, ինչպես նաև մեծը, կլինի ծեսն իմացող, կրող, փոխանցող: Շատ կարևոր է այս ամենը ներմուծել ընտանեկան միջավայր, որտեղ սիրելի, հարազատ մարդկանց հետ մանուկը ավելի վստահ, համարձակ ու ազատ կգործի՝ ժառանգելով ամենակարևորը՝ ազգային մշակութային արժեքները: **[8]**

1.3 Ծիսական խաղերի իրականացում

Ծիսական խաղերի, ծիսական գործողությունների միջոցով սանը ծանոթանում է ազգային մշակութային այլ դաշտի հետ, որտեղ միասին ներկայանում են խաղը, երգը, պարը, ծիսական գործողությունները («Ծեսը՝ ինքնագիտակցության միջոց» , «Ազգային ծեսերին, խաղերին, երգերին՝ նոր կյանք»):

Զատկական ձվախաղեր . Զատիկի ծիսական արարողակարգը իրականացավ Ագարակի մանկապարտեզում, որին ներկա էին ինչպես մեր խմբի երեխաները, այնպես էլ նրանց մյուս ընկերները: Մեծով, փոքրով խաղացինք՝ պարով, երգով, անբռնազբոս գործողությունների ընթացքով: Իհարկե, ծեսի ամենահետաքրքիր մասը մանկական ծիսական ձվախաղերն էին: Հասկանալի էր, որ այդ խաղերը պետք է խաղային միայն դրսում, քանի որ ներսում, մանավանդ՝ «Զուգլդորիկ»-ը, չէր կարող լինել այն խաղը, որը խաղացել են և որը հիմա կխաղային այն ազատությամբ ու հրճվանքով, ինչպիսին խաղացին: Կարելի էր «Զուպտտոցին» խաղալ նաև ներսում,

բայց, անկեղծ ասած, երբ ներս մտանք, էլ ոչ մի երեխա խաղերը շարունակելու ցանկություն չհայտնեց: Հասկանալի էր, որ բնական միջավայրն իրենն արել էր:

Զանգեզուրում չիքը հարց ու պատասխանի ձևով էր արվում: Նախ՝ ամբողջ տունը դատարկել են, ապա կանանցից մեկը, քարը ձեռքն առած, բարձրացել է կտուրն ու երդիկի մոտ կանգնել, իսկ մյուսը՝ տան ներսում՝ երդիկի տակ: Տանիքին կանգնածը քարը տանում էր բերում երդիկի շուրջն ու հարցնում.

- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:

- Մուկն աղա:

- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:

- Քունջ ու պուջախի տակերն աղա...

Մարդիկ հրամայական արարողությամբ ձգտել են ոչնչացնել չարը, անցանկալին: Ինչպե՞ս կարելի է ծիսական այս արարողակարգը վերածել խաղի և ուղղակի խաղալ՝ հիմնական գաղափարը թողնելով տեղում և այլ խնդիր լուծել: Այս պատասխանը տրվեց 5 տարեկանների սաների հետ խաղալիս՝ Զատկական ծիսական խաղեր. «Չիք, չիք», «Աղամ, աղամ»: [3]

<u>Ազգային տոների և ծեսերի</u> անչափ հետաքրքիր ու գունեղ է անցնում հատկապես մանկապարտեզում, քանզի դերերում պարզ, ուրախ երեխաներն են: Այդպիսի տոների շարքից ցանկանում եմ խոսել ԲԱՐԵԿԵՆԴԱՆ տոնի մասին, որին մենք պատրաստվել էինք ամենայն սիրով, ուրախությամբ: Հյուրերն ու երեխաները ստացան լավ տպավորություններ: Գրված սցենարը ու օգտագործված բոլոր պարագաները օգնեցին օրը դարձնել ուրախ , ինչպես տոնը (Նկար 5, նկար 6):

ԳԼՈՒԽ 2

Գործնական մաս

2.1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկություններին անցնելուց առաջ ցանկանում եմ նշել . որ այժմ երեխաների կողմից ժողովրդական, ազգային արվեստին, ազգային տոներին անմիջական մասնակցության ներդրումը բարձրացնում է նրանց մեջ բարոյական զգացմունքները, զարգացնում է գեղարվեստական աշխարհը՝ բարձրացնեովլ իրենց տրամադրությունը, ձեւավորել գեղագիտական համ:

Նախադպրոցական տարիքի անձի անձի ձեւավորման համար ազգային տոները ունեն կարևոր նշանակություն մի քանի տեսանկյունից.

- Ազգային տոները և ծեսերը երեխաներին ծանոթացնում է ժողովրդական ավանդույթներին եւ ժողովրդի պատմությանը, կյանքի եւ մեծահասակների եւ երեխաների միջեւ կյանքի, սովորույթների, զգեստների, փոխհարաբերությունների ինքնատիպությանը.

- Շատ ազգային տոներ կապված են բարոյական արժեքների նկատմամբ հարգանքի, կրթության հետ. ազնվություն, բարեխիղճություն, բարություն եւ ողորմություն, մեծահոգություն, արդարություն.

- Ազգային տոները ձեւավորում են տոնական մշակույթ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնառությունը և զարգացումը պետք է կազմակերպվի բազմակողմանի, քանզի այս հանգամանքն է ընկած նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում: Այս համոզմունքը բացատրվում է նրանով, որ երեխաների ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները,

սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար:

Այս տեսանկյունից, որպես դաստիարակ կարևորում եմ « Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» թեմային անդրադառնալը, որպես հետազոտական աշխատանք ևս մեկ անգամ ուսումնասիրելը և որպես հայ ևս մեկ անգամ վերապրել հպարտության մեծ զգացում՝ հասկանալով ազգային մեծ դպրոցի ու հարուստ մշակույթի դերը:

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերիմաստավորումներ են ունեցել:Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի մեջ , որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր , մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Դրանից են՝

Սուրբ Զատիկը, Վարդավառը, Ծաղկազարդը, Համբարձումը:

Ժամանակակից տարբեր գլոբալ մակարդակի փոփոխությունները, ուրբանիզացիան մարդկանց հեռվացրել են ծիսական առօրյայից և հաճախ որոշակի ծեսեր դուրս են գալիս գործածությունից: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Ազգային ծեսերը և տոները մեծ աշխուժությամբ, եռանդով, սիրով են կազմակերպվում և անցկացվում բոլոր նախակրթական հաստատություններում: Այս առումով Մեղրիի մանկապարտեզ ՀՈԱԿ –ը ևս չի առանձնանում:

Տոնական միջոցառումների կազմակերպումը եւ անցկացումը ընդլայնում են երեխաների գիտելիքները երկրի պատմության, տոնի պատմության մասին, այն մասին, թե ինչպես է այն նշվում ընտանիքում: Տոնի ընթացքում երեխան ստանում է

դրական հույզեր, որոնք ուրախության զգացում են առաջացնում թիմի հետ համատեղ գործունեությունից, սա հարմարավետություն է ստեղծում իր հուզական վիճակում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ժողովրդական , ազգային տոների կազմակերպումը պետք է հիմնված լինի երեք դիրքերի վրա: Նախ եւ առաջ, տոնի պատրաստում, որը որոշակի ժամանակ ստեղծում է երեխաների գործունեության հեռանկարը: Այս գործընթացի ընթացքում նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ստեղծվում է խաղային տրամադրություն, ցանկություն կա, միմյանց հաճելի դարձնելու պատրաստակամություն, որը կօգնի բարոյական որոշ հատկությունների ձեւավորման համար:

Երկրորդ - միշտ զարգանում է տոնի ծրագիրը եւ սցենարի բովանդակությունը: Հիմնական բանը որ պետք է հաշվի առնել դա՝ երեխաների գործունեությունը փառատոնում: Երեխաները ուրախ են տոնի անցկացման ժամանակ, եթե նրանք շփվում են միմյանց հետ. Նրանք կատարում են ժողովրդական պարեր, խաղային ժողովրդական խաղեր են խաղում, երգում, մասնակցում են տարբեր մրցույթների եւ ծեսերի:

Երրորդ, տոնը միշտ պայծառ հուզական իրադարձություն է, ինչը նշանակում է, որ այն պետք է երկար ժամանակ հիշվի երեխաների համար, դրա առավել վառ եւ հետաքրքիր պահերը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ազգային տոնը կազմակերպելիսես որպես դաստիարակ առաջնորդվել եմ հոգեբանական - մանկավարժական սկզբունքներով, որը հնարավորություն տվեց երեխաների մոտ ձևավորել հետևյալ մշակույթը. ակտիվ մոտեցում, անհատի եւ կոլեկտիվի համադրված գործողություններ, հանգստի եւ գիտելիքների միասնություն, բարոյական եւ գեղագիտական կողմնորոշման սկզբունք:

Կիրառեցի նաև ինտեգրատիվ մոտեցում: Այն թույլ է տալիս համատեղել գիտելիքները եւ զվարճանքը փառատոնում, լրացրեք այն բարոյապես, գեղագիտական եւ մշակութային բովանդակությամբ:

Հաջորդ կարեւոր սկզբունքը ազգային տոնի նախապատրաստման ընթացքում երեխաների անհատական եւ հավաքական գործունեության համադրությունն է: Հասարակական կողմնորոշմամբ համատեղ գործողությունը նպաստում է հասակակիցների հետ դրական հարաբերությունների ձեւավորմանը, գործունեության բովանդակության վերաբերյալ համաձայնեցնելու ունակությունը, նրանց, ովքեր դրա կարիքը ունեն:

Ազգային ծեսերի իրականացումը ունի մի շարք դրական կողմեր, հատկապես՝ երեխան ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային, սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն ու ասիկները, երեխան երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները և հարստացնում է բառապաշարը, ծեսը ամրացնում է համագործակցային կապ:

Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը , ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան:

Ծիսական հիմնական կարգը ենթադրում է , որ յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից թեմատիկ երգեր ու պարեր:

Աշխատանքի նպատակն է նաև ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող:

Երեխան, քայլ առ քայլ , անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով յուրացնում է ծեսը: Այս տեսանկյունից ազգային տոնը, ծեսը

նախադպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացում դարձել է կարևոր հիմնական մաս, որը իր մեջ ամփոփում է ամենատարբեր հմտությունների ու կարողությունների՝ սկզբնապես միգուցե չերևացող, բայց իրականում խորքային հիմք:

Հետազոտական նյութի տեսական մասում բոլոր ազգային տոների մասին խոսելով, ցանկացա առանձնացնել և պարապմունքի թեմա ընտրել ՍՈՒՐԲ Զատիկի տոնը: Քանզի տարիների փորձը ցույց է տվել, որ երեխաների , ինչպես նաև մեծահասակների մոտ այն յուրահատուկ աշխուժություն է առաջացնում:

Պարապմունքը անցկացրել եմ միջին խմբի (4-5 տ.) հետ:Պարապմունքը իրականացնելու համար ինձ օգնել է երաժշտության դաստիարակը և պարուսույցը, քանի որ ինտեգրված պարապմունք էր՝ խոսքի զարգացում և երաժշտություն:

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ : ԶԱՏԿԻ ԾԵՍ

Հիսուս Քրիստոսի Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Զատիկը Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է: Սկիզբ է առնում հրեաների կողմից այսօր նշվող Պասեք տոնից, որի ժամանակ ըստ քրիստոնեական դավանանքի 1-ին դարում Երուսաղեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը: Գիտության մեջ զատիկ բառի և տոնի ծագման տարբեր մեկնաբանություններ են կատարվել: Զատիկ բառը բացատրել են ազատություն,զատել,զոհել և այլ բառերով,նույնացրել են եգիպտական,վրացական,ասորական,պարսկական աստվածների անունների հետ: Այս ամենից ամենահավանականը զատիկ բառը զատել,բաժանել,անջատել բայերից բխեցնելն է:

Այժմ Զատիկ տոնի մասին : Ենթադրություններ կան, որ այն հայերի նախաքրիստոնեական տոներից է, որի իմաստը եղել է բնության զարթոնքը,որը տոնվել է գարնան սկզբին: Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Տոնին բոլորը սպասել են անհամբեր: Դրան նախորդել է 40 օր պաս պահելը:

Զատիկին մարդիկ երկար են նախապատրաստվել՝ մատաղի միջոցներ են հավաքել,յոթ բաղարջ են թխել,ձու են հավաքել,հրաժարվել են խնջույքներից , հարսանիքներից, մաքրությամբ են զբաղվել,տարբեր միջոցների են դիմել հիվանդություններից,հրդեհներից,չար ոգիներից , երաշտից,ջրհեղեղներից ազատվելու համար: Տոնի նախօրեին և տոնին մարդիկ միմյանց ողջունել են Քրիստոսի հարության առթիվ,մասնակցել են պատարագի, հավաքվել են ծիսական սեղանի շուրջ՝պասից դուրս եկել,մատաղ են արել,ներկած ձվեր իրար նվիրել, ձվակռիվներ,պարեր ու խաղեր կազմակերպել:

Տոնի նախապատրաստական փուլը մեր մանկապարտեզում

Միջին խմբի երեխաների հետ բարձր տրամադրությամբ տոնի մասին որոշակի տեղեկատվություն ունենալով գնում ենք մանկապարտեզի այգին: Պարտեզից հավաքում ենք խատուտիկներ, երիցուկներ, առվույտներ ՝ վերհիշելով ծաղիկների անունները,հավաքում ծառի ճյուղեր: Ծաղկահավաքի և ճյուղերի հավաքման ընթացքում ներկայացնում ենք , թե ինչպես պետք է ծաղիկը քաղել, որ չփչանա՝ նաև դրանից հետագայում դեղաբույս պատրաստելու համար, որ ճյուղերը ընտրել, ինչպես վարվել բնության տարրերի՝ ծառերի, ծաղիկների հետ: Իրար օգնելով, երգելով, հյուսում ենք ծաղիկները, պատրաստում գունագեղ ծաղկեշղթաներ, ծաղկեպսակներ:

Երեխաների մոտ բարձր տրամադրությունը պահպանելու համար որոշեցի հենց բակում կազմակերպել ազգային բակային խաղերից մեկը՝ **Յոթ քարանի**: Երեխաները սիրով խաղացին՝ տալով բազում հետաքրքիր հարցեր:

Վերադառնում ենք խմբասենյակ, որտեղ երեխաների մասնակցությամբ եգիպտացորենի պայթեցվաց հատիկներով, զատիկներով, զարդարված ձվերով, գույնզգույն ժապավեններով զարդարում ենք այգու ծառերից էտած մի ճյուղ՝ կիրառելով տեխնոլոգիայի հմտություններ և ստանալով գարնան խորհրդանիշ տոնական ծառ: Ծաղկազարդի նպատակն է՝ երեխայի, մարդու մեջ սերմանել, սեր, հոգատար վերաբերմունք բնության հանդեպ: Երեխաները շատ ոգևորված էին այդ աշխատանքով, քանզի մեծ էր նրանց մասնակցությունը և հետաքրքվածությունը:

Աձիկացան- Հարության տոնի նախապատրաստական աշխատանքներից մեկը: Աձիկը ծլեցրած ցորենն է, որը մեռնող ու հառնող կյանքի խորհրդանիշն է: Այսինքն՝ ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծլում է ու միջուկից դուրս է գալիս կանաչը՝ խորհրդանշելով նոր կյանքի սկիզբը: Աձիկացանի համար մեզ անհրաժեշտ է ափսե, բամբակ (որը հողի դեր է կատարելու) և սերմեր՝ հիմնականում ցորեն, գարի, ոսպ և այլն: Նախ ափսեի մեջ հավասարաչափ տարածում ենք բամբասկը, այնուհետև ցողում ենք ջրով և ցանում ենք սերմերը: Սակայն այսքանը դեռ բավական չէ, որպեսզի սերմերը ծիլ տան: Մենք երեխաներին սովորեցրեցինք, թե ինչպես պետք է խնամեն և հոգ տանեն, որ իրենց սերմերը ծիլ տան և կանաչեն: Երեխաները հասկացան, որ սերմերը կծլեն միայն արևի ջերմության և ջրի շնորհիվ:

Տոնի անցկացման փուլը : Պարապմունք -դաս

Բաց պարապմունքի նպատակը - Վերհիշել ազգային տոները՝ շեշտը դնելով Սուրբ Զատիկ տոնի վրա: Սեր և հետաքրքրություն առաջացնել ազգային տոների, երգերի, ազգային խաղերի հանդեպ հենց խաղերի միջոցով: Ամրակայել բարոյական դաստիարակությունը, զարգացնել գեղագիտական ճաշակ:

Օգտագործված դիդակտիկ նյութեր և պարագաներ - Տարազային գորգ, սափոր, ներկած ձվեր,աձիկ ծաղկեփնջեր, պարան, տոնին և իրավիճակին բնորոշ մի քանի այլ անհրաժեշտ պարագաներ:

Դաստիարակ - Երեխաներ այսօր մենք Ձեզ հետ միասին զրուցելու և վերհիշելու ենք մեր ազգային տոները, շեշտը դնելով երեխաների կողմից շատ սիրված Սուրբ Զատիկ տոնի վրա: Գարնանը բնությունը զարթոնք է ապրում և շատ տոներ նշվում են հենց գարնանը: Կարող եք մի քանի տոնի անուն նշել:

Երեխաները պատասխանում են - ...

Դաստիարակ - Տոները լինում են պետական, ազգային և եկեղեցական: Պետական տոները հիմնականում արտահայտում են երկրի և ժողովրդի համար պատմական պահերը : Ազգային են կոչվում վաղնջական ժամանակներում ծնունդ առած տոները: Եկեղեցական կարևոր տոները կոչվում են տաղավար:Որոշ եկեղեցական և ազգային տոներ ժամանակի ընթացքում միահյուսվել են միմյանց

հետ: Դրանցից են Սուրբ Զատիկը, Վարդավառը, Համբարձումը, Տեառն ընդառաջը, Ծաղկազարդը: Ով կարող է ասել երբ է նշվում Սուրբ Զատիկ տոնը:
Երեխաները պատասխանում են - ...

Երաժշտական դադար - Երեխաներին կատարեցին Զատկի երգերից «Գնացեք, տեսեք» և «Յալալի» երգերը, որը մեծ ոգևորությամբ երգեցինք ու խաղարկեցինք երեխաների հետ միասին: Երգի արագության, ռիթմի հետ արագ կողմնորոշվել և կարողանալ ճիշտ կազմակերպել ռիթմով ծափերը, զույգերով երեխաների կամրջաձև պահած կամարի տակով արագ անցնելը, ետ վերադառնալը:

Բեմադրություն - Հաջորդը, որ երգեցինք և բեմադրեցինք՝ «Կարկաչա» երգն էր: Ինձ այս հարցում օգնեցին երաժշտական դաստիարակը և պարուսույցը Նախ, երեխաների հետ մի փոքր զրուցեցինք եղանակային փոփոխությունների, գարնան մասին, այնուհետև բացատրեցինք երգի իմաստը: Նախկինում տոնն ավելի գունեղ էր և գեղեցիկ: Երեխաները տնից տուն էին գնում, շրխկանները շրխկացնելով իմաց տալիս իրենց գաուստը, իսկ տանտերերը հյուրասիրում էին երեխաներին՝ տալով չներկված ձվեր, ալյուր, յուղ և այլն: Երեխաներն էլ, բարեմաղթանքներ ասելով, հեռանում էին: Երեխաները խանդավառությամբ երգեցին, «վախեցրեցին», օրհնեցին և բարեմաղթանքներ ասեցին «տանտերերին»:

Դաստիարակ - Իսկ ինչ խորհուրդ ունի Սուրբ Զատկի տոնը:
Երեխաները պատասխանում են - ...
Դաստիարակ - Երեխաներ իսկ էլ ինչպես են անվանում Սուրբ Զատիկի տոնը:
Երեխաները պատասխանում են -...
Դաստիարակ - Հայկական տոներին բնորոշ են մեծ բազմությունների հավաքները, մրցախաղերը, երգերն ու պարերը, ասմունքը, ճոխ ճաշկերույթները: Իսկ որ կերակուրն է բնորոշ եղել եփել Սուրբ Զատկի տոնին:
-...Երեխաները պատասխանում են -
Դաստիարակ – Երեխաներ Զատիկին մարդիկ երկար են նախապատրաստվել: Դե եկեք միասին հիշենք ինչեր են արել նրանք:
---...Երեխաները պատասխանում են
Դաստիարակ – Ասեք խնդրեմ ինձ տոնի ավանդույթներից մեկը:

Երեխաները պատասխանում են ---...

Դաստիարակ - Իսկ հիմա եկեք ասենք Սորբ Զատիկ տոնի ուխտաբեր ավետիսը:

Երեխաները պատասխանում են -...

Պար- << Ժողովրդական>> Սայաթ Նովա:

Իսկ հիմա եկեք բաժանենք մեր կողմից ներկված ձվերը մեր հյուրերին, շրջենք խմբով և գովերգենք, բարեմաղթանքներ ասենք ներկաներին:

Մեթոդական ցուցումներ- Հարցն ուղղել ամբողջ խմբին, պատասխանը ստանալ մեկ երեխայից, ուշադրության կենտրոնում պահել խմբի բոլոր երեխաներին, ապահովել բոլոր երեխաների մասնակցությունը, ապահովել երեխա-դաստիարակ և երեխա – ծնող համագործակցությունը:

Տնօրենի դիտարկում

Դաստիարակը բաց դասին նախապատրաստվել էր մեծ պատասխանատվությամբ և խնամքով: Բաց դասը նվիրված էր ազգային տոներին՝ «Զատիկ» շեշտադրմամբ:Դաստիարակը ներկայացրեց տոների տեսակները, ազգային, պետական, եկեղեցական տոների տարբերությունները:

«Զատիկ» տոնի համար բաց դասին հնչեցին թեմատիկ բանաստեղծություններ, ազգային զատկական երգեր, ներկայացվեցին ազգային պարեր: Դաստիարակը ներկայացրեց նաև տոնի նախապատմությունը: Սաները ծանոթ էին նաև զատկական ճաշատեսակներին և դրանց խորհուրդը: Երեխաների համար հաճելի անակնկալ էր դաստիարակի կողմից կազմակերպված ազգային և զատկական խաղերը:

Տոնը դարձավ համընդհանուր,երբ հյուրերին բաժանվեցին ձվեր ու սկսվեց ձվակռիվը: Սաների ոգևորվածությունը մեծ էր:

Պարապմունքը համարում եմ հաջողված և ստացված:

Դասընթացակներ- Ապահովեց անկաշկանդվածություն, շարժունակություն: Սերմանեց համախմբվածություն, ապահովեց տրամադրության բարձրացում:

Ծնողներ կարծիքները ամփոփելով և վերլուծելով հասկացա, որ նրանք նույնպես գոհ էին, ավելին, այնքան մեր էր ոգևորվածությունը, որ ստացա առաջարկներ բոլոր նմանատիպ տոն-միջոցառումներին մշտապես ապահովել իրենց մասնկացությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի ավարտին ես եկա այսպիսի եզրահանգումների.

- Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապված են:

- Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացման դրդող «առարկայական տարածությունն» է և համարժեք բարոյահոգեբանական մթնոլորտը:

- Հայ ժողովրդական տոներն ու ծեսերը իրենց բացառիկ կարևոր դերն ունեն մանկապարտեզում , քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա կառուցվում բարձրարժեք կրթությունը

- Ծեսերի միջոցով զարգանում է երեխաների երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, ակտիվությունը, ինքնուրույնությունը,ճանաչողությունը, հարստանում բառապաշարը, բարձրանում տրամադրությունը, զարգանում մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

Աշխատանքի վերջնարդյունքում կարևորում եմ նշել, որ տոնի կազմակերպման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ծնողների ակտիվ ներառմանը տոնին պատրաստվելու եւ անցկացնելու գործընթացում՝ հասնելով երեխաների եւ մեծահասակների ընդհանուր համախմբվածության, միավորված և ուրախ նախապատրաստական աշխատանքի, ոգևորվածության:

Ուսումնասիրելով մանկապարտեզում ազգային տոներ կազմակերպելու եւ անցկացնելու մեթոդաբանությունը, եկա այն եզրակացության, որ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է իմանա ժողովրդական տոների, ծեսերի կազմակերպման եւ իրականացման առանձնահատկությունները, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական , անկաշկանդ միջավայրում ավելի լավ է կիրառում իր ունեցած գիտելիքները, հմտություն է ձեռք բերում :

Գրականության ցանկ

1. Գեղամյան Ա. Ա., <<Ծեսը, ծիսակարգը և սովորութը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ>>, հոդված,
2. Չեպեյեան Ղ., <<Ծիսական գիտելիքներ>>, Անգլիա, 1986թ.:
3. https://harutyunyananna85.files.wordpress.com/2015/03/2-d5add5a1d5b2d5a5d680-d5add5a1d5b2d5a5d680d5a3d5a5d680.pdf
4. Հայ ազգային ծեսերն ու տոները https://marinemkrtchyan.files.wordpress.com/2013/08/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf
5. 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
6. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
7. С. А. Козлова, «Дошкольная педагогика»
8. Նախադպրոցական մանկավարժություն. Նաիրա Գրիգորյան
9. Վ. Բդոյան, «Հայ ժողովրդական խաղեր»
10. Խաղը ծիսական միջավայրում https://nvardbarseghyan.files.wordpress.com/2018/06/d5add5a1d5b2d5a8-d5aed5abd5bdd5a1d5afd5a1d5b6-d5b4d5abd5bbd5a1d5bed5a1d5b5d680d5b8d682d5b4.pdf